ՄՇԱԿԻ ՁԵՌՔԻ ՏԱԿ

ԲԱՆԱԼԻ ՀԱՄԱՐ. ՀՈՎՀԱՆՆԵՍ 15.1-8

*1 Ես եմ ճշմարիտ որթը, և **Իմ** Հայրը մշակն է: 2 Ամեն մի ճյուղ, որ ինձանում է և պտուղ չի բերում, **Նա** կտրում է:*

Հուդան հեռացավ, և միայն դրանից հետո Հիսուսը շարունակեց Իր խորը ուսուցումը մնացած աշակերտներին՝ ներառյալ Հովհաննես 14–17 գլուխները, որտեղ Նա խոսում է՝

Իր հետ մնալու մասին

Սուրբ Հոգու գալու մասին

Որթի և ճյուղերի մասին (Հովհ. 15)

*Եվ ամեն մի ճյուղ, որ պտուղ է բերում, **Նա** մաքրում է (kathairō էտում է) այն, որ ավելի պտղաբեր լինի:*

Ինչու է էտումը հարկավոր

Էտումը նշանակում է՝ կտրել ավելորդ, չոր կամ անպտուղ ճյուղերը: Սա անհրաժեշտ է երեք հիմնական պատճառներով.

1. Որպեսզի կյանքը կենտրոնանա պտղի վրա

Երբ մշակն էտում է ավելորդ ճյուղերը, ամբողջ ուժը գնում է առողջ ճյուղերին, և դրանք բերում են ավելի շատ և ավելի լավ պտուղ:

2. Որպեսզի լույսը հասնի բույսին

Խիտ և չէտված որթատունկը չի ստանում բավական լույս: Լույսը անհրաժեշտ է պտղի հասունացման համար: Էտումը բացում է որթատունկը, որպեսզի արևի լույսը հասնի պտղաբեր ճյուղերին:

3. Որպեսզի հեռացվի այն, ինչ վնասում է բույսին

Չոր, հիվանդ կամ թույլ ճյուղերը ոչ միայն պտուղ չեն բերում, այլ նաև խանգարում են ամբողջ բույսի առողջությանը: Դրանք հեռացնելը պաշտպանում է ամբողջ որթատունկը:

*3 Արդ, դուք մաքուր եք այն խոսքի միջոցով, որ **Ես** ձեզ խոսեցի:*
*4 Մնացե՛ք իմ մեջ, և **Ես** ձեր մեջ: Ինչպես ճյուղը չի կարող ինքն իրենից պտուղ բերել, եթե որթի վրա չմնա, այնպես էլ դուք չեք կարող, եթե իմ մեջ չմնաք: 5 Ես եմ որթը, իսկ դուք՝ ճյուղերն եք: Նա, ով մնում է իմ մեջ և Ես նրա մեջ, նա շատ պտուղ է բերում, որովհետև առանց ինձ դուք ոչինչ չեք կարող անել: 6 Եթե մեկն Իմ մեջ չմնա, Նա ճյուղի պես դուրս կնետվի և կչորանա, և մարդիկ կհավաքեն դրանք ու կրակը կգցեն, և նրանք կվառվեն: 7 Եթե դուք **Իմ** մեջ մնաք, և **Իմ** խոսքերը ձեր մեջ մնան, պիտի խնդրեք, ինչ որ կամենաք և այն պիտի լինի ձեզ:*

*8 **Իմ** Հայրը կփառավորվի դրանով որ դուք շատ պտուղ բերեք. Այդպես դուք **Իմ** աշակերտները լինեք:*

Հովհաննես 15.1-8 հատվածը շատ հստակ բացահայտում է Հոր ակտիվ և անձնական գործը հավատացյալի կյանքում:

1. ՀԱՅՐԸ ՀԱՎԱՏԱՑՅԱԼԻ ԿՅԱՆՔԻ ՄՇԱԿՆ Է – ԳՈՐԾԸՆԹԱՑ

1 ...իմ Հայրը մշակն է:

- *Մշակը տեսնում է պտուղը, որը մենք դեռ չենք տեսնում:*
- *Շատ կարևոր հարց է. «Ինչպե՞ս է Հայրը մշակ»:*

ՀԱՅՐԸ ՀԵՌԱՑՆՈՒՄ Է ԱՅՆ, ԻՆՉ ԽԱՆԳԱՐՈՒՄ Է ԱՃԻՆ

2 Ամեն մի ճյուղ, որ ինձանում է և պտուղ չի բերում, ***Նա*** *կտրում է:*

սխալ մտածելակերպ, մարմնական սովորություններ,

կապվածությունները, որոնք զբաղեցնում են Աստծո տեղը մեր սրտում,

հոգևոր անտարբերությունը, որը թուլացնում է մեր հարաբերությունը Աստծո հետ:

- *Հոր նպատակը միշտ նույնն է՝*

  հավատացյալին առաջնորդել սրբությունից սրբություն և փառքից փառք:

2. ՀԱՅՐԸ ՄԱՔՐՈՒՄ Է ՊՏՂԱԲԵՐԻՆ՝ ԱՎԵԼԻ ՄԵԾ ՊՏՂԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

*2 ...Եվ ամեն մի ճյուղ, որ պտուղ է բերում, **Նա** մաքրում է / էտում է (kathairō, սրբում է) այն, որ ավելի պտղաբեր լինի:*

Այստեղ օգտագործված «մաքուր» բառը հունարենում katharoi (καθαροί) է, որը գալիս է նույն արմատից, «մաքրելե, էտելե, մաքրել պատրաստել պտղաբերության համար»:

*Եբրայեցիս 10.2 – մեկ անգամ **մաքրված լինելով...***

- *Սա շատ կարևոր ճշմարտություն է. Հայրը աշխատում է ոչ միայն թույլ հավատացյալների վրա, այլ նաև պտղաբեր հավատացյալների վրա:*

Սրբացումը աճի ճանապարհ է:

2 Եվ ամեն մի ճյուղ, որ <u>պտուղ է</u> բերում

2 <u>ավելի պտղաբեր</u> լինի

8 որ դուք <u>շատ պտուղ</u> բերեք

- *Փորձությունները, սպասման շրջանները, բոլորը զտման պահերեն.*

3. ՈՐԴՈՒ ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆ ԳՈՐԾՆ Է ՄԵՐ ՄԵՋ

*3 Արդ, դուք մաքուր եք այն խոսքի միջոցով, որ **Ես** ձեզ խոսեցի:*

- *Հայրը էտում է որպես Մշակ,*
- *բայց Որդին մաքրում է Իր Խոսքով:*

Հայրը աշխատում է մեր կյանքի իրավիճակների միջոցով,

Որդին աշխատում է մեր ներսում Իր Խոսքի միջոցով,

4. ՈՐԴԻՆ ՊՏՂԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ Է ԱՊԱՀՈՎՈՒՄ ԻՐ ԽՈՍՔԻ ՄԵՋ <u>ՄՆԱԼՈՒ ՄԻՋՈՑՈՎ</u>

*7 Եթե դուք **Իմ** մեջ մնաք, և **Իմ** խոսքերը ձեր մեջ մնան...*

Նույն խոսքը, որը կյանք տվեց քեզ, նաև պատրաստում է քեզ պտղաբերության համար:

Պտղաբերության ընթացքը սկսվում է ներսից

Նախ Աստված աշխատում է մեր սրտում, հետո փոխում է մեր միտքը, և հետո այդ փոփոխությունը երևում է մեր կյանքում:

Գուցե այսօր դու անցնում ես էտման շրջան:

Գուցե Աստված հեռացնում է ինչ-որ բան քո կյանքից:

Գուցե դա ցավոտ է, գուցե դա դժվար է հասկանալ,

Ինչպես գրված է Եբրայեցիներ 12.11-ում.

Եվ ամեն խրատ հենց նույն պահին ուրախություն չի թվում, այլ տրտմություն, սակայն հետո դրանով վարժուածներին արդար խաղաղության պտուղ է տալիս:

ՍԱ Է ՎԵՐՋՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿԸ՝

Իմ *մեջ մնաք,*

Իմ *խոսքերը ձեր մեջ մնան,*

Իմ *Հայրը կփառավորվի*

Իմ *աշակերտները լինեք:*

ԻՆՉ Է ԱՍՈՒՄ ՍՈՒՐԲ ՀՈԳԻՆ ՔԵԶ ԱՅՍ ՊԱՏԳԱՄԻ ՄԻՋՈՑՈՎ